

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Հա՛յր բազումողորմ, խոստովանիմ առ Քեզ
Որպէս զանառակ որդին.
Թո՛ղ ինձ ըզմեղս իմ և ողորմեա:
2. Տէ՛ր որ գըթացար ի կինըն Քանանացի,
Գըթա՛ և յիս ի մեղաւորս. և ողորմեա:
3. Տէ՛ր, որ դարձուցեր ըզմաքսաւորն
Ի գիտութիւն ճըշմարտութեան.
Դարձո՛ և զիս ըզմոլորեալս. և ողորմեա:

* * *

1. Զըղջըման իմոյ զարտասուս արկանեմ
Առաջի քո Քրիստոս. թո՛ղ ինձ ըզմեղս իմ
Որպէս երբեմն ըզպոռնիկին.
Որ միայնդ ես բազմագութ:
2. Անկանիմ առաջի քո Քրիստոս
Որ հովիւդ ես բանաւոր հօտի.
Խնդրեա՛ և զիս ըզմոլորեալս.
Որ միայնդ ես բազմագութ:
3. Ըզմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս.
Որ բըժիշկդ ես հոգւոց և տէր կենաց.
Բըժըշկեա՛ և զիմ զհիւանդութիւնս.
Որ միայնդ ես բազմագութ:

* * *

1. Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
2. Մըրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ:
3. Նաւապետ բարի՝ լեր անձին իմոյ ապաւէն:

* * *

1. Դարձո՛ զցասումըն քո ի մէնջ,
յաղաղակել հողեղինացս.
Բազմագութ, Տէ՛ր, խնայեա և մի՛ կորուսաներ:
2. Կանգնեա՛ զանկեալս ի գլորմանէ՝
Ըզվիրաւորեալս ի թըշնամւոյն.
Որ բըժիշկդ ես հիւանդաց՝
Բըժըշկեա զիմ զհիւանդութիւնս:
3. Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ,
գոչեմ որպէս ըզմաքսաւորն.
Աստուած, քաւեա՛ զիս ըզմեղաւորս:

*
* *

1. Յոյս իմ ես դու, Տէ՛ր, քաւիչ յանցանաց իմոց.
Մի՛ անտես առներ զբղխումն արտասուաց իմոց.
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:
2. Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին.
Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո.
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:
3. Փրկեա՛ զիս, Աստուած, ի բազում մեղաց իմոց.
Արա՛ արժանի քոյին սուրբ արքայութեանդ.
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

*
* *

1. Մեղք իմ բազում են յոյժ,
Ծանր են քան զաւազ ծովու.
Քանզի քեզ միայնոյ մեղայ.
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:
2. Բա՛ց, Տէ՛ր, ըզդուռն ողորմութեան՝
Որ ողբալով կարդամ առ քեզ.
Քանզի քեզ միայնոյ մեղայ
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:
3. Հեղ յիս ըզգըթութիւնդ քո
Բազումողորմ և մարդասէր.
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

*
* *

1. Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ՝
Զի քեզ միայնոյ մեղայ:
2. Առաւել լրա զիս ի տրղմոյ յանցանաց
Աղբիւր բըժշկութեան.
Եւ ողորմեա՛:
3. Ցարենէ փրկեա՛ զիս՝
Որ հոգւոց և մարմնոց ունիս իշխանութիւն.
Եւ ողորմեա՛:

*
* *

1. Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին էառ ըզքաւութիւն.
Նովին ձայնիւրն և ես գոչեմ՝
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:
2. Աւազակն աղաղակէր ի խաչին՝
Յիշեա՛, զիս Տէ՛ր,
Նովին ձայնիւրն և ես գոչեմ:
3. Անառակ որդին աղերսանօք աղաչէր ըզքեզ.
Հայր, մեղայ յերկինս և առաջի քո.
Նովին ձայնիւրն և ես գոչեմ՝
Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

*
* *

1. Համբառնամ առ քեզ, Տէ՛ր, զաչս իմ.
Նայեա՛ յիս գըթութեամբ քո և ողորմեա՛:
2. Դու ես յոյս և ապաւէն իմ.
Զերծո՛ զիս յորոգայթէ մեղաց և ողորմեա:
3. Ապրեցուցիչ իմ և փրկիչ իմ.
Ապրեցո՛ զիս յորոգայթէ մեղաց և ողորմեա:

*
* *

1. Անկանիմ առաջի քո և խնդրեմ
Զթողութիւն յանցանաց իմոց.
Մի՛ անտես առներ, Հայր, զաղաչանս իմ:
2. Աղաղակեմ որպէս մաքսաւորն.
Եւ հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս պոռնիկն.
Մի՛ անտես առներ, Հա՛յր, զաղաչանս իմ:
3. Յաներևոյթ թշնամւոյն պարտեցայ.
Եւ ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ.
Մի՛ անտես առներ, Հա՛յր, զաղաչանս իմ:

*
* *

1. Ալիք յանցանաց զիս ալեկոծեն.
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն:
2. Արդ՝ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս.
Ոչ եմ ապրելոց յահագին հրոյն:
3. Մեղայ քեզ Քրիստոս Որդի Աստուծոյ.
Շնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց: